Բացի այդ, Դատարանն ընդգծում է նաև այն, որ քննարկվող չափաբաժինների մասով Հրավերով սահմանված գնման գնի, Հայցվորի կողմից առաջարկված արժեքի և մյուս մասնակիցների կողմից առաջարկված գնի համադրության արդյունքում գնահատող հանձնաժողովը կարող էր հետևության հանգել Հայցվորի կողմից առաջարկվող գնի՝ ինքնարժեքից պակաս լինելու փաստի վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման:

Միաժամանակ անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, Դատարանը ցանկանում է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 96.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ՄԻՆԵ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Տպագրված ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.03.2026թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «Մինե» ՍՊԸ-ին ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 29-րդ, 38-րդ չափաբաժնների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից «Տպագրված ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.03.2026թ. նիստի թիվ 3

արձանագրությամբ «Մինե» ՍՊԸ-ին ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-26/ՏՊԱ-1 ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 29-րդ, 38-րդ չափաբաժնների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-ից հօգուտ «ՄԻՆԵ» ՍՊԸ-ի բռնագանձել 96.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE1D-AFBF-41D9-9F04 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am